

— Էրթաս բարեօվ, Աստուած քիւ բան յաջողի:

302. Գաւիթ կգեայ դձին քեշի, Խանտիւթ կըսի.

— Վա՛յ, իմ մտէն գնացիր էր, Գաւթը ձին քեշիւ էր գիււ. վուր Գաւիթ խէծնէր:

Յետիւ Գաւթըն կը վազի, կըսի.— Գաւի՛թ, Գաւի՛թ, կանգ- նը. իս գեամ, քիւ ձին քեշիմ գիււ:

Գաւիթ էն տե կը դադըր:

303. Խանտիւթ կը մտնի թաւէն¹, կը տըննայ էնա քեառ- սուն ձին էլ փախած ի վրին քիւնճ, կճկըուած ի, չըն կշխընայ գիււ փախնըն.

Գաւթը ձին մէկ սարը կեօրա կեօ փայլը² մէջ կանգնիր ի. Խանտիւթ ձեռ թլից, ձիու վըզ տը բռնէր, քեշեր գիււ:

304. Ձին ըրշից, չճանչցաւ, վըզ չտուից, զգլեօխ սկնայ թլից, Խանտիւթ իրի, թռըփալին դպաւ գետին.

— Վա՛ն Գաւի՛թ, էսաց, քեօ ձին ըծը ոպանից:

Գաւիթ մտաւ ներս, զԽանտիւթ գրկից, էսաց.

— Է՛յ, ձին, Աստուած քեօ Ֆէ՛ճմ կտռի. վրէ՛, մարդ կնկեան կը գարկի, դիւ չտըսար կնիկ էր. ախր իս գէաս³ կանգնած էր: կըսի.— Խանտիւթ, ձեռ աո՛ւ, քեշի գիււ:

— Խա՛, կըսի, միտը ունիս ըծը քեօ ձիով տաս սպանիլ:

— Ձէ՛, կըսի, ձին էլ ձէն չը տար, քեշի գիււ. նա գտիր գիւ ուտար էր:

Գինաց, ձեռ տուից ձիու գլեօխ, քեշից, ձին բան էլ չէ- րաւ, զին գրկից վերայ:

Գաւիթ զինք զօլանքտիր քեշից, կապից, ըլաւ խիծաւ, գինաց կռիւ:

305. Գինաց, խասաւ կռուու մէջ:

Խանտիւթ միտք էրաց.— Ապա իս ինչ էնիմ.

Սկօն աղամարդու շուր խագեաւ: վուր սկի մարդ սկնայ շուր չը տըսիր էր:

Ձին էլ քեշից գիււ, աղէկ զին իրի վերէն, խիծաւ. յիւր թուր բռնից ձեռ. Գաւթ ճամբխեով չգնաց, մէկ յիւրիշ կող- մէ գինաց, խասաւ կօշումին:

306. Խանտիւթ կը տիսնայ զԳաւիթ, վուր ինչպէս մէկ անութի գէլ ընկնի մէջ գեառնիրուն, զգեառնիր մէ մէկ խեղ- գի թլի. էնպէս Գաւիթ ընկի էգա զօշումի մէջ, չըմա ճերկեով կը ջարդի, կգեայ:

Խանտիւթն ի, թամաշա կէնի:

Ձէ՛, որ Գաւիթ ասկեար կը ջարդի:

1 Թրք.— Գոմ: 2 Թրք.— Ախտու: 3 Ախտու: